Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհի հմտություններ Շանհայ 2026» միջազգային մրցույթի շրջանակներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ք. Շանհայ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղվողներ՝

1. Սիրանուշ Մելոյան, ԿԳՄՄՆ Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ.

Գործուղման վայրը և ժամկետը՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանհայ քաղաք, 2026 թվականի սեպտեմբերի 21-25

Հրավիրող կողմը՝

«Աշխարհի հմտություններ» Հայաստանյան գրասենյակ

Գործուղման նպատակը՝ Որպես ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական դիտորդ՝ մասնակցել «Աշխարհի հմտություններ Շանհայ 2026» միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, ծանոթանալ մրցույթի կազմակերպման և անցկացման միջազգային փորձին, ինչպես նաև ՄԿՈՒՀ ոլորտի զարգացմանն ուղղված միջազգային նախաձեռնություններին և փորձի փոխանակման հնարավորություններին:

1. Մասնակցել եմ «Աշխարհի հմտություններ» միջազգային մրցույթի 48-րդ մրցույթի բացման արարողությանը, որի ընթացքում հնարավորություն եմ ունեցել ծանոթանալու մրցույթի կազմակերպման ընդհանուր կառուցվածքին, մասնակից երկրների և պատվիրակությունների ներգրավվածությանը, ինչպես նաև մրցույթի պաշտոնական մեկնարկի կազմակերպման ընթացակարգերին: Բացման արարողությունը հնարավորություն է տվել նաև ընդհանուր պատկերացում կազմելու «Աշխարհի հմտություններ» շարժման շրջանակներում մասնագիտական հմտությունների զարգացման, երիտասարդների մասնագիտական ներուժի բացահայտման և միջազգային համագործակցության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

2. Մշտադիտարկել եմ մրցութային գործընթացի ընթացքը՝ ծանոթանալով տարբեր հմտությունների մրցութային փուլերի կազմակերպմանը, գնահատման գործընթացներին, մրցավարների և փորձագետների աշխատանքին, ինչպես նաև

մասնակիցների համար ապահովված պայմաններին: Մշտադիտարկման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել մրցութային գործընթացի կազմակերպման, մասնագիտական չափանիշների կիրառման, գնահատման թափանցիկության, ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մրցակիցների և փորձագետների միջև արդյունավետ համագործակցության մեխանիզմներին:

Քննարկման թեմաները՝

Մասնակցել եմ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտին առնչվող միջազգային քննարկումների և համաժողովների, մասնավորապես՝

- «Կառուցելով առավել ներառական ՄԿՈՒ համակարգեր»,
- «Ապագա աշխատատեղերին միտված հմտությունների զարգացում. UNESCO Global Skills Academy»,
- «Հմտությունների կառավարման կողմնորոշում» թեմայով քննարկմանը:

Քննարկումների շրջանակներում անդրադարձ է կատարվել ՄԿՈՒ համակարգերի ներառականության ապահովմանը, աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան հմտությունների զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում կրթության և ուսուցման գործընթացների վերափոխմանը, ինչպես նաև կրթության, գործատուների և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ Մասնակցել եմ մրցութային հանձնաժողովների, փորձագետների և պատվիրակների աշխատանքային քննարկումներին, որոնց ընթացքում հնարավորություն է եղել ծանոթանալու միջազգային մրցույթների կազմակերպման, մասնագիտական հմտությունների գնահատման, փորձագետների աշխատանքի համակարգման և մրցութային գործընթացների կառավարման գործիքներին:

«Մեկ պետություն, մեկ դպրոց» ծրագրի շրջանակներում այցելել եմ Շանհայի միջազգային դպրոցներից մեկը: Այցի ընթացքում ծանոթացել եմ դպրոցի կառավարման և կազմակերպական մեխանիզմներին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպես նաև դպրոցի զարգացման և կառավարման մոտեցումներին: Դպրոցի տնօրինության ներկայացուցիչների հետ քննարկվել են կրթության զարգացմանն ուղղված նրանց տեսլականը, ապագային միտված կրթական մոտեցումները, առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող հետևողական քայլերը:

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Ստորագրություն, ամսաթիվ՝

Սիրանուշ Մելոյան

30.09.2026 թ.